Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

18.04.2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Գ.Տ.Ղազարյանս, ուսումնասիրելով վարույթիս թիվ 13992718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2018 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից հաղորդում է ստացվել, որ զանգահարել է Գուրգեն Գրիգորի Կարապետյանը և հայտնել, որ «Գնունի» շուկայի դիմացի շենքի բակից գողացել են իր սպիտակ «Նիվա» մակնիշի 01 GG 704 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

Պարզվել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 00:00-ից մինչև՝ 11:00-ն ընկած ժամանակահատվածում առևանգել են Վարդանանց 22 շենքի բակում կայանված, Գ.Կարապետյանին պատկանող «Վազ 2121» մակնիշի 01 GG 704 հաշվառման համարանիշի ավտոմեքենան:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի ՔՀԽ ծառայողների կողմից ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ հանցանք կատարած անձը հանդիսանում է Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը: Պարզվել է նաև, որ Ա. Նոր-Պարոնյանը դեկտեմբերի 24-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, նշված ավտոմեքենայով գնացել է Հր. Քոչար փողոց, որտեղ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է նույն փողոցի 27/11 հասցեում գործող ավտոպահեստամասրի խանութի մուտքի դուռը և խանութից գողացել է ավտոպահեստամասեր:

Դեպքի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնում 2018 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 13992718 քրեական գործը, որը 2019 թվականի հունվարի 16-ին ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

2019 թվականի փետրվարի 06-ին Արսեն Նոր-Պարոնյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունը: 2019 թվականի փետվարի 13-ին Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2018 թվականի նոյեմբերի 07-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևան քաղաքի բնակիչ Արսեն Աշոտի Նոր-Պարոնյանը գողություն կատարելու դիտավորությամբ մետաղական լինգի միջոցով բացել է «Մարմարա Գոլդ» ՍՊԸ-ի շրջանակներում գործող, Արարատի մարզի Գեղանիստ գյուղի 1-ին փողոցի 24 հասցեում գտնվող «Միերմար» հանրախանութի կից հացատան մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել պահեստարան հանդիսացող հանրածանութ և այնտեղից գողացել մոտ 2.000.000 ՀՀ դրամ արժողության

ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգման ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված Արմեն Պարգևի Գևորգյանին, որը հավասարապես տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին:

2. Թարգման Ա.Գևորգյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ՝ **Գ.Ղազարյան**

Որոշմանը ծանոթացա, միաժամանակ ինձ բացատրվել են իմ իրավունքներն ու պարտականությունները՝

Թարգման՝ **Ա.Գևորգյան**

Տեղեկանք

Թիվ 59104618 քրեական գործով որպես "Պոլիգլոտներ" ՍՊԸ թարգմանիչ ներգրավված Տաթևիկ Քոչարյանը և Հասմիկ Մարգարյանը կատարել են 170.879նիշ հայերենից ռուսերեն լեզվով գրավոր թարգմանության աշխատանքներ:

Երևան քաղաքի ՔՎ ծանր հանցագործությունների

քննության բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Կիրակոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգման ներգրավելու մասին

< 17 > մայիսի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ քննիչ Դ.Ռ.Կիրակոսյանս վերանայելով վարույթում քննվող թիվ 59104618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

16.08.2018թ. ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ԾՀՔ բաժին է ստացվել <Արդշինբանկ> ՓԲ ընկերության անվտանգության ծառայության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Լ.Հովհաննիսյանի հաղորդումն այն մասին, որ 2018թ. մայիսի 7-ից մայիսի 14-ն ընկած ժամանակահատվածում <Արդշինբանկ> ՓԲ և Մարինե Ներսեսյանի անվամբ գրանցված <Պարադիգմա Թրեյդինգ> ՍՊ ընկերությունների միջև կնքվել է ընդհանուր թվով 20 մուրհակների /վեքսիլ/ առք ու վաճառքի պայմանագրեր, որոնք հանձնման-ընդունման ակտերով փոխանցվել են <Արդշինբանկ> ՓԲԸ-ին, իսկ բանկն իր հերթին դրանց դիմաց բանկում բացված <Պարադիգմա Թրեյդինգ> ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին է փոխանցել ընդհանուր 196.655.369 ՌԴ ռուբլի գումար: Մուրհակները բանկին փոխանցելուց հետո պարզվել է, որ դրանց հակառակ կողմում բացակայել է մուրհակները նախկինում տիրապետող <Էլիտ Սպեց Ստրոյ> ընկերության նշումները՝ (արժեթղթի հանձնման մասին նշում՝ ինդոսամենթ) մուրհակները նոր տիրապետողին փոխանցելուն չառարկելու վերաբերյալ: Դրանից հետո ՌԴ-ում բանկի լիազորված անձ Սերգեյ Արմենակի Գրիգորյանը, ինդոսամենթների բացակայության տեխնիկական բացթողում լինելու հանգամանքը պարզելու համար 2018թ. հուլիսի 10-ին ՌԴ Մոսկվա քաղաքում հանդիպել է /վեքսիլ/ փաստաթղթի վաճառքի միջնորդ հանդիսացող, ՌԴ քաղաքացի Եվգենիյ Ալեքսանդրի Զայացին՝ խնդիրը կարգավորելու նպատակով: Եվգենիյ Զայացը, բացթողումը տեղում շտկելու պատրվակով, կանչել է <Էլիտ Սպեց Ստրոյ> ընկերության ներկայացուցչին՝ հանձնարարելով վերցնել /վեքսիլ/ փաստաթղթերը՝ բացթողնված նշումները կատարելու և նոր միայն դրանք հետ վերադարձնելու պայմանով: Նշված անձնավորությունը վերցնելով /վեքսիլ/ փաստաթղթերը՝ հեռացել է, և այլևս դրանք հետ չեն վերադարձվել: Վերը նկարագրված հանգամանքներում <Արդշինբանկ> ՓԲ ընկերությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

2018թ. օգոստոսի 26-ին նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 59104618 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հայերենից ռուսերեն թարգմանել թիվ 59104618 քրեական գործի նյութերը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Գ.Հ.Ավագյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննված թիվ 61203109 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված <<Պոլիգլոտներ>> ՍՊ ընկերության թարգմանիչ Աննա Միքայելյանը կատարել է հայերենից ֆրանսերեն գրավոր թարգմանություն՝ 8742 նիշ պարունակությամբ

Ավագ քննիչ՝ **Գ.Հ.Ավագյան**

ՈՐՈՇՈՒՄ

թարգման ճանաչելու մասին

31.05.2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Գ.Հ.Ավագյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 61203109 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Սոնա Հայկազի Վանյանը 1999-2002թթ. ընթացքում գտնվելով Շվեցարիայում, <<Էյչ Էս Բի Սի>> բանկի իր հաշվեհամարին մուտք է արել 4.282 ԱՄՆ դոլար գումար և 2002թ. դեկտեմբեր ամսին վերադառնալով Երևան պարզել է, որ նախկին ամուսին Արամ Պետրոսյանը 2002թ. հուլիսի 19-ի թվագրմամբ իր անունից կազմելով կեղծ երաշխավորագիր, դրա միջոցով տիրացել է այդ գումարին:

06.06.2016թ. սույն քրեական գործով միջազգային իրավական օգնություն ցույց տալու հարցում է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժին՝ Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմին ուղարկելու միջնորդությամբ:

2008 թվականի օգոստոսի 06-ին Սոնյա Հայկազի Վանյանը Երևան քաղաքի դատախազին հասցեագրված դիմումով հայտնել է, որ 2008 թվականի հունիս ամսին դիմել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների դատախազին՝ 2002 թվականին խոշոր չափերի հասնող իր գումարը հափշտակելու փաստի առթիվ, սակայն դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը 01.07.2008թ. մերժվել են ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննության մարմնի կողմից, քանի որ նույն հիմքով առկա է եղել 23.02.2003թ.-ին քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին չվերացված որոշում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել է Սոնա Վանյանի դիմումների առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնում նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ 23.02.2003թ. և 01.07.2008թ. որոշումները և 18.09.2009թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 61203109 քրեական գործը, այն ընդունվել է ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժնի վարույթ և կատարվել է նախաքննություն:

2019 թվականի ապրիլի 16-ին որոշում է կայացվել թիվ 61203109 քրեական գործով վարույթը վերսկսելու մասին:

Քրեական գործի հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու նպատակով, ղեկավարվելով «Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» 20.04.1959թ. Եվրոպական կոնվենցիայով՝ իր 17.03.1978թ. լրացուցիչ և 08.11.2001թ. երկրորդ լրացուցիչ արձանագրություններով, ինչպես նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 474-րդ հոդվածի դրույթների պահանջներով միջազգային իրավական օգնություն ցույց տալու մասին հարցում է ուղարկվել Ֆրանսիայի հանրապետության իրավասու մարմնին:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով:

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սույն քրեական գործով թարգմանիչ ճանաչել Աննա Միքայելյանին /AS 0293539, տրված 001-ի կողմից/:

2. Ա.Միքայելյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները. նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Գ.Հ.Ավագյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝ Ա.Միքայելյան

Տեղեկանք

Թիվ 15869318 քրեական գործով որպես "Պոլիգլոտներ" ՍՊԸ թարգմանիչ ներգրավված Մարալ Հաքարյանը կատարել է 39.462 նիշ արաբերենից հայերեն լեզվի գրավոր թարգմանության աշխատանքներ:

Կենտրոն և Նորք Մարաշ ՎՇ ՔԲ քննիչ Ա.Աբրոյան

ՈՐՈՇՈՒՄ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

05-ը հունիսի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Ա.Կ. Աբրոյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 15869318 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Սևան Շանթի Կոտումյանը այն մասին, որ նույն օրը ժամը 21:00-ի սահմաններում անհայտ անձը գաղտնի հափշտակել է Հանրապետության հրապարակի շատրվանների մոտ դրված իր պայուսակը, որի մեջ եղել է իր և իր նշանածի լիբանանյան անձնագրերը, շրջագայության տոմսեր և գումար՝ պատճառելով մոտ 420.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

2018 թվականի սեպտեմբերի 30-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հարուցվել է թիվ 15869318 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդ. 1-ին մասով և 324 հոդվածի 1 ին մասով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործում առկա փաստաթղթերը պետք է թարգմանվեն հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել Պոլիգլոտներ ՍՊ ընկերության թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 15869318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Պոլիգլոտներ ՍՊ ընկերության թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին /ՀՀ քաղաքացու անձնագիր AN 0315451, վկայական 20/:
2. Մարալ Մարտիրոսի Զաքարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝ Ա.Կ. ԱԲՐՈՅԱՆ

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Մ. Զաքարյան

«17» 06 2019թ.

Տեղեկանք

Թիվ 19252194 քրեական գործով որպես “Պոլիգլոտներ” ՍՊԸ թարգմանիչ ներգրավված Աննա Միքայելյանը կատարել է 1934 նիշ ֆրանսերենից հայերեն լեզվով գրավոր թարգմանության աշխատանքներ:

7-րդ կայազորային ՔԲ ավագ քննիչ Ա.Կոբայյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
քրեական գործով վարույթին թարգմանիչ ներգրավելու մասին

22 մայիս 2019թ. ք.Վանաձոր

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ա.Կոբայանս վերանայելով վարույթում քննվող թիվ 19252194 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Վանաձոր քաղաքի բնակիչ, 02.07.1975թ-ին ծնված Անդրանիկ Վոլոդյայի Մանուկյանը 24.03.1992թ-ին Վանաձորի զինկոմիսարիատում անցել է կցագրում, ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար, սակայն խուսափել է հերթական և հետագա զորակոչերից՝ այդ ծառայությունից ազատվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ:

Դեպքի առթիվ 16. 08. 1994թ–ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 19252194 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում որոշումներ են կայացվել Անդրանիկ Վոլոդյայի Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, հետախուզում հայտարարելու և մեղադրյալի գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքով քրեական գործի վարույթը կասեցնելու մասին:

21.05.2019թ-ին Ա.Վ.Մանուկյանը Ֆրանսիայի Հանրապետությունից նոտարական կարգով հաստատված դիմում է ուղարկել իր նկատմամբ հարուցված քրեական գործը կարճելու վերաբերյալ վարույթի ժամկետը լրանալու հիմքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է, իսկ մեղադրյալ Ա.Վ.Մանուկյանի դիմումը գրված է ֆրանսերեն, ուստի դիմումը թարգմանելու համար անհրաժեշտ է սույն քրեական գործով ներգրավել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Կասեցված թիվ 19252194 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորում ստացած Աննա Միքայելյանին, /անձնագիր AS 0293539, տրված՝ 20,07,2018թ., 001-ի կողմից/, որը գործով չշահագրգռված անձ է և նրան պետական միջոցների հաշվին թույլատրել կատարել Ա.Վ.Մանուկյանի դիմումի թարգմանությունը:
2. Թարգմանիչ Աննա Միքայելյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին հայտնել նրան ստորագրությամբ:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային
քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ա.Կոբայան

Սույն որոշումն ինձ հայտնվել է, ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝ Անանա Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

07-ը հունիսի, 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 83166418 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվում է թիվ 83166418 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-ին մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 184-րդ հոդվածի 3-րդ մասով, 214-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 325-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված առերևույթ հանցագործությունների դեպքերի վերաբերյալ:

Նախաքննության ընթացքում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության ներքին աուդիտի և վերհսկման ծառայությունից առգրավվել են ռուսերեն լեզվով կազմված, հիշյալ ծառայության կողմից ընկերությունում կատարված ստուգումների վերաբերյալ մեծածավալ հաշվետվություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր, որոնք ենթակա են թարգմանության հայերեն լեզվով:

Նկատի ունենալով վերը նշված փաստաթղթերի մեծածավալ լինելու հանգամանքը և այն, որ Լիլիթ Սուրկի Խաչատրյանը, Տաթևիկ Գուգարքի Քոչարյանը, Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանը, Սյուզաննա Ֆրունզիկի Խալաթյանը, Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը, Արմինե Վարուժանի Ալեքսանյանը և Անի Սերյոժայի Հովհաննիսյանը հանդիսանում են ռուսերեն լեզվով թարգմանություններ կատարող թարգմանիչներ և չեն հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ և 193-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Վարույթումս քննվող թիվ 83166418 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Լիլիթ Սուրկի Խաչատրյանին /ծնված՝ 03.07.1986թ., անձնագիր՝ AN0305005/, Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին /ծնված՝ 17.03.1980թ., անձնագիր՝ AR0516452/, Ռաիսա Աբգարի Հովհաննիսյանին /ծնված՝ 27.10.1987թ., նույնականացման քարտ՝ 004193702/, Սյուզաննա Ֆրունզիկի Խալաթյանին /ծնված՝ 20.01.1988թ., անձնագիր՝ AN0318564/, Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին /ծնված՝ 23.03.1987թ., անձնագիր՝ AM0552160/,

Արմինե Վարուժանի Ալեքսանյանին /ծնված՝ 03.07.1986թ., անձնագիր՝ AM0594618/ և Անի Սերյոժայի Հովհաննիսյանին /ծնված՝ 30.12.1987թ., անձնագիր՝ AS0304475/, նրանց պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վարչության պետի տեղակալ՝ **Վ.Հովհաննիսյան**

Ծանոթացա սույն որոշմանը: Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչներ՝

Լ.Ս.Խաչատրյան

Տ.Գ.Քոչարյան

Ռ.Ա.Հովհաննիսյան

Ս.Ֆ.Խալաթյան

Գ.Ա.Շիրմազանյան

Ա.Վ.Ալեքսանյան

Ա.Ս.Հովհաննիսյան